ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ANQA-2022/66

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
14 հունիսի 2022 թ. N 66

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ընդհանուր տեղեկություն հաստատության մասին

Հաստատության լրիվ անվանումը՝ «Վայոց ձորի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ

Գործունեության հասցեն՝ ՀՀ, Վայոց ձորի մարզ, ք. Եղեգնաձոր, Սպանդարյան 3

Նախորդ հավատարմագրման մասին
որոշումը և ժամկետը՝ **չի ունեցել**

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի Հավատարմագրման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով, «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ, «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության ընթացակարգով և «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգով, 2021թ.հունիսի 2-ին քննարկեց Վայոց ձորի տարածաշրջանային պետական քոլեջի (այսուհետ՝ ՎՁՏՊՔ, քոլեջ) ինստիտուցիոնալ կարողությունների հավատարմագրման հարցը:

Հավատարմագրման գործընթացի հիմնական փուլերն իրականացվել են հետևյալ ժամկետներում.

դիմում-հայտի ներկայացում	10 փետրվարի 2021 թ.
ինքնավերլուծության ներկայացում	8 հունիսի 2021 թ.
փորձագիտական այցի իրականացում	18-21հոկտեմբերի 2020 թ.
փորձագիտական զեկույցի ներկայացում	30 դեկտեմբերի 2021 թ.
թերությունների վերացման ծրագրի ներկայացում	15 փետրվարի 2022 թ.

Քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագիտական խումբը: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներից 3-ը՝ **«Կառավարում և վարչարարություն», «Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ» և «Հետազոտություն և զարգացում»,** գնահատվել են անբավարար:

Հանձնաժողովը, ուսումնասիրելով Վայոց ձորի տարածաշրջանային պետական քոլեջի կողմից ներկայացված ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը, զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ քոլեջի դիտողությունները և առաջարկությունները, փորձագիտական զեկույցը, զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների ծրագիրը, լսելով քոլեջի փորձագիտական գնահատման վերաբերյալ Հանձնաժողովի նախագահի կողմից ընտրված երեք անդամների եզրակացությունները, որոնք ձևավորվել են փորձագիտական խմբի անդամների և ուսումնական հաստատության ներկայացուցիչների հետ հանդիպումների արդյունքում, ինչպես նաև Հանձնաժողովի անդամների դիտարկումներն ու առաջարկությունները, ամրագրեց հետևյալը.

1. **Առկա են որոշակի խնդիրներ որակավորումների արժանահավատ շնորհման տեսանկյունից, սակայն առկա են նաև առաջխաղացման միտումներ և օրինակներ**

Քոլեջը, լինելով մարզի միակ միջին մասնագիտական ուսումնական հաստատությունը, ունի մեծ պատասխանատվություն տարածաշրջանի գործատուներին աշխատանքային կադրերով ապահովելու, ինչպես նաև աշխատաշուկայի պահանջներին արագ արձագանքելու հարցում: Միաժամանակ այն շահակիցների կողմից դիտվում է որպես բուհերում շարունակական կրթության ապահովման օղակ;

ՎՁՏՊՔ-ն կարևորում է կրթական ծրագրերի վերջնարդունքները և փորձում է ցուցաբերել ՄԿԾ-ների մշակման վերջնարդյունքահեն մոտեցում, ինչպես ծրագրի մակարդակով, այնպես էլ մոդուլի և առանձին դասընթացների: ՄԿԾ-ների արդիականացման և տեղայնացման համար աշխատաշուկայի և գործատուների պահանջների համակողմանի ուսումնասիրություն չի արվել: Հստակեցված չեն արտաքին շահակիցների ակնկալիքները: Փոփոխությունների համար հիմք են հանդիսացել գործընթացում ներգրավված անձանց ընդհանրական պատկերացումները և որոշ շահակիցների հետ ոչ ֆորմալ հանդիպումներում արտահայտված կարծիքները:

Դեռևս ամբողջությամբ ներդրված չեն պրակտիկ և վերլուծական կարողությունները երաշխավորող մեթոդներ, բայց քոլեջը մշակել է վերջնարդյունքներին համապատասխան գիտելիքի գնահատման, դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականություն, ինչպես նաև այդ մեթոդների մանրամասն նկարագիր:

Քոլեջում կիրառվում են դասավանդման բազմաթիվ ինտերակտիվ մեթոդներ, որոնք հարստացվել են առցանց ուսուցման ընթացքում: Դրանց մի մասը բավական արդիական է և նպաստում է ուսանողակենտրոն միջավայրի ստեղծմանը:

Սակայն ՄԿԾ-ների և ուսուցման մեթոդների ընտրության արդյունավետության գնահատման համար հստակ մեխանիզմներ ՄՈՒՀ-ում ներդրված չեն:

ՎՁՏՊՔ-ն դասախոսական կազմի ընտրության ժամանակ առաջնորդվում է ՊԿՁ-ներով ներկայացվող հիմնական պահանջներով: Քայլեր են կատարվում դասախոսական կազմի կատարելագործման, փորձի փոխանակման և լավագույն փորձի տարածման ուղղությամբ:
Քոլեջը կարևորում է նաև ՄԿԾ-ների իրականացման գործընթացի գնահատումը և ներդրել է որոշ մեխանիզմներ,որոնք դեռևս լիարժեք չեն գործում: Փորձ է արվում ՄԿԾ-ների մշակման, իրականացման և բարելավման գործընթացներում ներգրավել գործատուների: ՄՈՒՀ-ում դեռևս ներդրված չեն ՊԴ կազմի կայունության ապահովման բավարար մեխանիզմներ:

ՎՁՏՊՔ-ում առկա է մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայր: Ինտերակտիվ ուսուցման լսարանի առկայությունը ևս նպաստում է դասապրոցեսի ավելի արդյունավետ կազմակերպմանը և ուսումնական գործընթացի բարելավմանը: Գործատուների հետ պայմանագրային հարաբերությունների հիման վրա քոլեջը կարողանում է մասամբ օգտագործել գործատուների ռեսուրսային ներուժը, որը հնարավորություն է տալիս լրացնել քոլեջի ռեսուրսային բազայի բացերը:
Գործող կրթական ծրագրերը, ՊԴ կազմը և նյութատեխնիկական բազան թույլ տալիս են որակյալ մասնագետներ պատրաստել:

2. ***Կառավարումն ու որակի ապահովման համակարգը ձևավորման փուլում է, սակայն առկա են զարգացման միտումներ և կառավարումը միտված է որակի բարելավմանը, որակավորումների արժանահավատ շնորհմանը:***

Քոլեջի նպատակները և առաքելությունը համահունչ է ՀՀ ՈԱԾ-ին: ՎՁՏՊՔ-ն, կարևորելով ռազմավարական կառավարումը և որակի ապահովման համակարգը, ստեղծել է որակի ապահովման և կառավարման բավականին մեխանիզմներ, որոնք հնարավորություն են ընձեռում ապահովելու կառավարման համակարգի շարունակական բարելավումը և արդյունավետության ապահովումը, սակայն գործընթացների և զարգացման պլանավորումը դեռևս չի բխում հնարավորությունների, ռեսուրսների և ռիսկերի հստակ հաշվառումից: Առկա է խզում պլանավորման և իրականացման միջև, հստակ չեն ՌԾ-ի մշտադիտարկման մեխանիզմները:

Քոլեջում սահմանված են վարչական ստորաբաժանումների գործառութային շրջանակներն ըստ համապատասխան փաստաթղթերի: Այս ամենը թույլ է տալիս ապահովել կանոնակարգված գործընթաց:

Քոլեջը կարևորում է որակի ապահովման գործընթացները, ներդրել է որոշ մեխանիզմներ տարբեր շահակիցների շրջանում կարիքների վերհանման նպատակով: Հաջողվել է որոշակիորեն ապահովել դասախոսների և վարչական աշխատակիցների ներգրավվածությունը որակի ապահովման գործընթացներում: Որակի ապահովման հանձնախումբը կարողացել է ազդեցություն ունենալ նաև հաշվետվողականության մեխանիզմների բարելավման հարցում, սակայն դեռևս տեսանելի չէ հարցումների արդյունքների ազդեցությունը գործընթացների վրա:

3. ***Միջազգայնացումն ու հետազոտական/ստեղծագործական գործունեությունը բավարար չեն աջակցում որակավորորումների արժանահավատ շնորհմանը.***

Քոլեջն արժևորել է հետազոտության ոլորտը և նպատակներ է առանձնացրել, մինչդեռ հստակեցված չեն հետազոտական ուղղությունները, հետազոտության երկարաժամկետ և կարճաժամկետ պլանավորում առկա չէ: Թույլ են ուսումնառության և հետազոտական աշխատանքների փոխկապակցման մեխանիզմները:

ՄՈՒՀ-ում առկա է ներքևից վերև հաշվետվողականության համակարգ, քոլեջն ապահովում է հաշվետվողականություն ներքին և արտաքին շահակիցների առաջ, ինչպես նաև աշխատանքներ է կատարում հասարակությանը արժեքների և գիտելիքի փոխանցման ուղղությամբ:

ՎՁՏՊՔ-ն նկատելի աշխատանքներ է իրականացնում արտաքին կապերի հաստատման և դրանց միջոցով ռեսուրսների զարգացումն ապահովելու ուղղությամբ:

Քոլեջը կարողանում է ներգրավվել նաև միջազգային ծրագրերում, որոնք ևս նպաստում են քոլեջի զարգացմանը, առկա է նաև դրանով պայմանավորված միջազգային փորձի ուսումնասիրման, ինչպես նաև՝ նոր ԿԾ-ների ներդման նախադեպեր: Քոլեջում դուալ կրթական ծրագրերի փորձարկումը, տարբեր երկրներ ուսումնական այցերը, ուսուցման արդյունավետ և իրեն արդարացրած փորձի ուսումնասիրությունն ու ներդրումը թույլ են տալիս շարունակաբար բարելավել կադրերի պատրաստման որակը:

Քոլեջում առկա են ուսանողների ընդունելության և հավաքագրման մեխանիզմներ, սովորողներն հնարավորություն ունեն բարձրաձայնելու իրենց կրթական կարիքների մասին, գործում է ուսանող-կուրսղեկ ամուր կապը: Քոլեջը ձգտում է ներդնել ուսանողների կարիերային նպաստող ծառայություններ;

4. Փորձագիտական զեկույցում նշված թերություններն առանցքային են որակավորորումների արժանահավատ շնորհման տեսանկյունից, միաժամանակ հիմքեր ստեղծված են բարելավումների համար:

5. Թերությունների վերացման ծրագիրն ըստ էության ներառում է փորձագետների կողմից տրված հիմնական խորհրդատվությունները: Ծրագիրը բավականին ընդգրկուն և իրատեսական է, իրականացման դեպքում կբերի որակական բարելավումների:

Ելնելով վերը նշվածից, Հավատարմագրման Հանձնաժողովը բաց քվեարկության արդյունքում

ՈՐՈՇԵՑ

1. **«Վայոց ձորի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ին շնորհել պայմանական ինստիտուցիոնալ հավատարմագրում 2 /երկու/ տարի ժամկետով:**
   - Հավատարմագրում շնորհելու որոշման հրապարակումից հետո՝ երկամսյա ժամկետում ՈԱԱԿ-ին ներկայացնել փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման վերանայված ծրագիր և համապատասխան ժամանակացույց՝ հաշվի առնելով **«Կառավարում և վարչարարություն», «Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ» և «Հետազոտություն և զարգացում»,** ոլորտներում առկա խնդիրներին առաջնահերթ լուծում տալու անհրաժեշտությունը,

2. **Հատուկ ուշադրություն դարձնել**.
   - դասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի և կայունության ապահովման հստակ մեխանիզմների կիրառմանը,
   - տվյալների հավաքագրման, արդյունքների վերլուծման և դրանց կիրառմանը որոշումների կայացման գործընթացում,

- քոլեջի բոլոր գործընթացներում ՊԻԳԲ շրջափուլի կիրառմանը,
- արտաքին կապերի զարգացմանը և գործատուների հետ համատեղ ռազմավարության մշակմանն ու իրագործմանը,
- ՄԿԾ-ների համապատասխանեցմանը տարածարջանի և աշխատաշուկայի կարիքներին,
- ուսանողների մոտ վերլուծական, ստեղծագործական և քննադատական կարողությունների զարգացմանը միտված ուսուցման կազմակերպմանը:

3. «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման կարգ»-ի 12-րդ կետի պահանջներին համապատասխան 6 ամիսը մեկ անգամ ՈԱԱԿ-ին գրավոր զեկույց ներկայացնել իրականացված գործողությունների արդյունքների վերաբերյալ՝ գնահատելով ակադեմիայի գործունեության բարելավումը, նորարարություններն ու ձեռքբերումները:
4. Հանձնարարել ՈԱԱԿ-ին պարտադիր մշտադիտարկման ենթարկել Վայոց ձորի տարածաշրջանային պետական քոլեջի գործունեության արդյունավետությունն՝ ըստ առաջընթացի առանցքային ցուցիչների:

Հավատարմագրման Հանձնաժողովի
նախագահ **Ա. Սաղյան**
2022 թ. հունիսի 14
ք.Երևան